



ՏՀՏ Նորարարություն

Եվրոպական միությունն իր **«EU4Digital» նախաձեռնության** միջոցով աջակցում է Արևելյան գործընկերության տարածաշրջանի ՏՀՏ հետազոտությունների, ստարտափների և նորարարական էկոհամակարգերի զարգացմանն ուղղված բարեփոխումներին ու գործողություններին՝ հիմնվելով ԵՄ փորձի և լավագույն պրակտիկաների վրա:

Հիմնական առաջնահերթությունը կայուն տնտեսական զարգացման համար անհրաժեշտ նորարարություններին օժանդակելու տեսանկյունից վճռական նշանակություն ունեցող **ՏՀՏ էկոհամակարգերի զարգացումն** է, այդ թվում՝ **սաղմնային և վենչուրային ֆինանսավորումը, աքսելերացիոն ծրագրերը, գործնական կապերի ընդլայնումն (նեթվորքինգ) ու կլաստերավորումը,**

ինչպես նաև հատուկ **կոմպետենցիաների և հմտությունների** զարգացումը: EU4Digital-ը նպատակ ունի նպաստել նման էկոհամակարգերի զարգացմանը՝ տարածաշրջանի ներսում ընկերությունների աճը խթանելու, ինչպես նաև ՀՆԱ-ի արտահանման և աշխատատեղերի ստեղծման գործում վերջիններիս ներդրումն ավելացնելու համար՝ կենտրոնանալով գործունեության մի քանի հիմնական ձևերի վրա:



ԵՄ նորմերի և լավագույն պրակտիկաների վրա հիմնված ընդհանուր **օրենսդրական դաշտի ստեղծում**, որը բարենպաստ միջավայր կապահովի ՏՀՏ նորարարությունների համար:



Արևելյան գործընկեր երկրների ՓՄՁ-ների և այլ շահագրգիռ կողմերի (բաղաբաղանկություն մշակողներ, ՏՀՏ նորարարությունների ենթակառուցվածքային կազմակերպություններ) համար մոդուլային ուսուցման փաթեթի (EdTech Hub ծրագիր) **ընդհանուր շրջանակի** մշակում:



Տարածաշրջանի ներսում և **ԵՄ-ի հեն նորարարական էկոհամակարգերի մասնակիցների միջև գործարար կապերի ընդլայնման** (նեթվորքինգի) խթանում:



«Ստարտափ Եվրոպա» ցանցերի և հարթակների ընդլայնում՝ Արևելյան գործընկեր երկրների կազմակերպություններին ներառելու նպատակով:



Տեղեկատվական արշավների իրականացում՝ ՏՀՏ նորարարությունների և այդ ոլորտում **կանանց մասնակցության մեծացման** կարևորության վերաբերյալ իրազեկվածության բարձրացման նպատակով:









Աջակցություն **«Թվային նորարարությունների մասշտաբների ընդլայնում» (DISC)** նախաձեռնության ընդարձակմանը դեպի Արևելյան գործընկեր երկրներ և աջակցություն բարձր տեխնոլոգիական ստարտափներին՝ **ՏՀՏ ձեռնարկատիրական էկոհամակարգերի կարողությունների զարգացման ուղեցույցի** մշակմամբ:

Նորարարական էկոհամակարգերի նկատմամբ ոչ պատշաճ ուշադրությունը հանգեցնում է Արևելյան գործընկեր երկրներից ուղեղների և ստարտափների արտահոսքի դեպի ավելի զարգացած ՏՀՏ էկոհամակարգ ունեցող երկրներ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕՐԵՆՆԵՐՎԱԿԱՆ ԵՐԶԱՆԱԿԻ ՀԱՍԱՐ ԶԱՎԱԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՅԶԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐ

EU4Digital-ը գործընկեր երկրներին աջակցել է ընտրված քաղաքականության առանցքային ոլորտներում՝ ՏՀՏ նորարարությունների զարգացման նպատակով:

-  **ՀԱՅԱՍՏԱՆ** Թվային նորարարությունների նկատմամբ **մտավոր սեփականության իրավունքի** կառավարում
-  **ԱՂԻԲԵՋԱՆ** **ՏՀՏ նորարարությունների աջակցմանն ուղղված կազմակերպչական** նոր **ձևեր**
-  **ԲԵԼԱՌՈՒՍ** **Արդյունաբերության թվայնացում (ավանդական հատվածներում գործող ՓՄՁ-ների թվային վերափոխում)**
-  **ՎՐԱՍԱՆ** **ՓՄՁ-ների համար** թվային նորարարությունների **ֆինանսավորման հասանելիություն**
-  **ՍՈԼՂՈՎԱ** ՏՀՏ նորարարական **էկոհամակարգեր՝ ստարտափների և ընդլայնվող ընկերությունների (սթեյլափների) համար**
-  **ՈՒԿՐԱԻՆԱ** **ՓՄՁ-ների համար** թվային նորարարությունների **ֆինանսավորման հասանելիություն**

Ինչու՞ են ՏՀՏ նորարարությունները կարևոր

ՏՀՏ նորարարությունները սոցիալ-տնտեսական փոփոխությունների շարժիչ ուժն են: Այն երկրներին վերագինում է իրենց տնտեսությունների վերակազմավորման և համաշխարհայինացման, ավելի արագ տնտեսական աճի ապահովման, նոր աշխատատեղերի ստեղծման, կենսամակարդակի բարձրացման և անհավասարությունների նվազեցման գործիքներով:



2013-2018 թվականներին ԵՄ-ում **ՏՀՏ ծառայություններից ստացված ավելացված արժեքն** աճել է մոտ **27%-ով** իսկ ՏՀՏ արտադրությունից ստացված ավելացված արժեքն աճել է **31%-ով**:



ՏՀՏ հատվածը **ներկայում ամերաարդյունավետներից մեկն է ԵՄ տնտեսության մեջ**. 2017թ.-ին տվյալ հատվածի առերևույթ աշխատանքային արտադրողականությունը **65.2%-ով** ավելի բարձր էր, քան ողջ ոչ ֆինանսական գործարար հատվածում:



Արևելյան գործընկեր երկրներում նույնպես նկատվում է ՏՀՏ ոլորտի աճ. **2017թ.-ին ՏՀՏ ծառայությունների արտահանման մասնաբաժինը** կազմել է ընդհանուր արտահանման շուրջ **5%-ը**, իսկ Բելառուսում և Ուկրաինայում՝ ծառայությունների արտահանման շուրջ **19%-ը**: 2012-2017 թվականներին նշված երկրներում աճի միջին տեմպը կազմել է մոտ **6%**՝ ցույց տալով ապագայում աճի ավելի մեծ ներուժ:



Ֆինանսավորվում է Եվրոպական միության EU4Digital նախաձեռնության ներքո

<https://eufordigital.eu/hy/thematic-area/ict-innovation/>